# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 10-13-Ը ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ (Ք. ԺՆԵՎ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ

**1. <u>Անունը, ազգանունը՝</u>**

Արմեն Սիմոնյան

**2. <u>Զբաղեցրած պաշտոնը՝</u>**

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

**3. <u>Գործուղման վայրը և ժամկետները.</u>**

Փետրվարի 10-ից 13-ը Շվեյցարական Համադաշնություն, ք.Ժնև

**4. <u>Հրավիրող կողմը.</u>**

ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով:

**5. <u>Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).</u>**

ԵՏՀ ներքին տրանսպորտի կոմիտեի 87-րդ նստաշրջանի մասնակցություն

**6. <u>Քննարկված թեմաները.</u>**

Միջոցառման ժամանակ քննարկվել են ԵՏՀ Ցամաքային տրանսպորտի կոմիտեի 87-րդ նստաշրջանի բարձրաստիճան հանդիպման տրանսպորտի զարգացման ու կապակցվածության, ինչպես նաև ցամաքային տրանսպորտի բնագավառում կլիմայական գործողությունների առաջմղման վերաբերյալ հարցեր:

Տեղի է ունեցել Բարձրաստիճան հատված՝ «Successes and Challenges for Inland Transport on the Road to 2030» խորագրի ներքո: Քննարկումներ են կազմակերպվել նախարարական կլոր սեղանների ձևաչափով, երկու հիմնական թեմաների շուրջ՝ կլիմայի փոփոխության դեմ ուղղված գործողություն և փոխկապակցվածություն: Առաջին թեմայի շուրջ քննարկումները վարել են Նիդերլանդները , իսկ երկրորդի շուրջ՝ Թուրքիան:

Նստաշրջանի ընթացքում մասնակից պատվիրակությունները բարձրաստիճան հատվածի ժամանակ հանդես են եկել Ցամաքային տրանսպորտի կոմիտեի՝ մինչև 2030թ. ռազմավարության իրագործմանն ուղղված խոստում-հանձնառություններով որոնք կարող են վերաբերել կապակցվածության ու տրանսպորտի խթանման, ճանապարհային անվտանգության, բնապահպանական բնույթի գործողություններին:

**7. <u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.</u>**

Հանդիպել եմ UNECE (ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի) ղեկավար անդամների հետ, քննարկվել են ճանապարհային տրանսպորտին առնչվող օրակարգային հարցեր:

Ելույթով հանդես եմ եկել «Խաղաղության խաչմերուկ» ՀՀ կառավարության կողմից նախաձեռնության վերաբերյալ՝ ներկայացնելով տրանսպորտային կապուղիները, դրանց զարգացման հեռանկարները և այլն:

Մասնակցել եմ փետրվարի 10-ին կայացած «Տրանսպորտի ապագան» ռազմավարական կանխատեսումների թեմայով նախարարական ոչ-պաշտոնական հանդիպմանը:

**8.<u>Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.</u>**

Ստորագրված փաստաթղթեր չկան:

**9. <u>Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.</u>**

**10. <u>Ստորագրությունը, ամսաթիվը</u>**

17.02.2025թ.